

«ՆՈՐ ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԼԵՂՈՒԻ» ԲԱՌԱՐԱՆՈՒՄ ԶԿԿԱՅՎԱԾ
ԲԱՌԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ

ՀՏԴ 81-11

DOI: 10.56246/18294480-2025.18-23

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ԵՊՀ հայոց լեզվի պատմության և ընդհանուր
լեզվաբանության ամբիոնի դասախոս,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Էլփոստ՝ susannagrigoryan@ysu.am

ՊԱՐՈՆՅԱՆ ՆԱԻՐԱ

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԵՊՀ դասախոս
Էլփոստ՝ nairaparonyan@ysu.am

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել գրաբարի բառակազմությունը ըստ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանում չվկայված բառերի: Ինչպես հայտնի է, լեզվի բաղադրիչներից ամենազգայունը բառապաշարն է, և ի տարբերություն լեզվական համակարգի մյուս բաղադրիչների՝ ամենաշատ փոփոխություններն այստեղ են հանդես գալիս: Լեզվի բառապաշարի հարստացումը կատարվում է արտաքին և ներքին միջոցներով: Բառապաշարի դասակարգումը կարելի է կատարել զանազան տեսակետներից՝ բառերի գործածության ակտիվության ու տարածվածության, բառերի կիրառական առանձնահատկությունների, բառակազմական կաղապարների և այլն: Հայերենի զարգացման տարբեր փուլերում կազմվել են նորանոր բառաձևեր, որոնք պարճառ են դարձել իմաստային զարգացման և փոփոխությունների, նոր իմաստների առաջացման և հենքի կորստի: Հայերենի բառային կազմի հարստացման, հայոց լեզվի բառապաշարի հարստացման կարևոր միջոցներից է սեփական բառակազմությունն ու բառաստեղծումը, բառերի վերաիմաստավորումը: Հայերենի բառակազմական հնարավորությունները դարերի ընթացքում ավելի են մշակվել և կատարելագործվել՝ դառնալով նոր կաղապարների ստեղծման, սակավ գործուն կաղապարների, մի շարք բառերի և ածանցների բառաստեղծական դերի աշխուժացման միջոց: Գրաբարի բառագանձի հարստության գործում կարևորագույն դեր ունի բառաբարդումը՝ վերլուծական և համադրական տեսակներով: Ածանցներն ու ածանցման կաղապարները նույնպես դարերի ընթացքում ավելի ճոխացել են և ընդարձակվել, ծավալվել ու լայն ընդգրկում ձեռք բերել: Դրան հակառակ,

որոշ ածանցական կաղապարներ դադարել են արդյունավետ լինելուց: Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարան, Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր»-ում վկայված բառանյութի բառակազմական վերլուծությունների միջոցով փորձել ենք ներկայացնել գրաբարի բարդ և ածանցավոր բառերի բառակազմական կաղապարները, դրանց կենսունակությունն ու տարածվածությունը համաժամանակյա դիտարկելու, որոշ դեպքերում նաև կաղապարային հետազոտ փոփոխությունները:

Բանալի բառեր. բառակազմություն, բառաբարդում, գրաբար, բառային կազմ, հարստացում, համաժամանակյա, կաղապար, ածանց, բաղադրիչ

Լեզվի բառապաշարի հարստացման կարևորագույն գործոններից մեկը բառակազմությունն է: Բնականաբար, յուրաքանչյուր լեզու իր պատմական զարգացման ընթացքում ստեղծում է բառեր կազմելու սեփական միջոցները: Այս հոդվածում մենք քննելու ենք գրաբարի բառակազմական համակարգը համաժամանակյա մոտեցմամբ՝ ըստ Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր» աշխատության: Բառակազմության հիմնական եղանակները ածանցումն ու բառաբարդումն են: Բառաբարդմամբ առաջացած բարդությունները լինում են հարադրական կամ վերլուծական և համադրական: Լ. Հովսեփյանը գրաբարի հարադրական բարդությունները բաժանում է երկու խմբի՝ կրկնավորներ և հարադրություններ: Կրկնավորները լինում են՝ 1) հարակցական՝ **մաղ մաղ, որակ որակ**, 2) շաղկապական, 3) նախդրական (**հերժ ի հերժ**)¹: Հարադրություններն էլ լինում են անվանական և բայական: Անվանական հարադրությունների համար Լ. Հովսեփյանն առանձնացնում է շաղկապական (հարց եւ քնին), նախդրական (անդէն առ նմին) և կապակցական (ամեն ինչ)² տեսակները: Անվանական հարադրական բարդությունները կազմվում են գոյական (**արիեստրախումբ տառք, անուանք բանգրանաց, որդի ոգւոյ, պտուղ շրթանց, տախտակ մտաց, փայտ կենաց, փայտ համարոյ, տիկնանց տիկին, հովոց գետինք**), ածական (**քնական ազդեցութիւն, բուրաստան աստուածային, գառն ճշմարիտ, գրատրական տառ, եկեղեցական գիր, հերակլեան քար, ծայնաւոր գործիք**), թվական, մակբայ, եղանակավորող բառ³ խոսքի մասերի, ինչպես նաև դերբայների ու բայահիմքերի հարադրությամբ (**արուեստող ձեռք, ծայնատու արուեստ, ոստամատոյց տան, տառաթել անկուած**): Բայական հարադրությունները լինում

¹ Մեր ընտրանքում շաղկապական կրկնավորների օրնակներ չկային:

² Տե՛ս Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմության վերլուծական տիպը, Եր., 2016, էջ 35:

³ Օրինակներ չենք բերել թվական, մակբայ, եղանակավորող բառ հարադիրներով, քանի որ բառարանում նման կառույցներ չկային:

են երկու տեսակ՝ հարադրավոր բայեր և զուգադրական բայեր: Հարադրավոր բայերի երկրորդ բաղադրիչը՝ հարադրյալը, միշտ բայ է, իսկ առաջին բաղադրիչը՝ հարադիրը, կարող է արտահայտվել գոյականով, ածականով, դերանունով, մակբայով, ձայնարկությամբ: Գրաբարում հարադրություն կազմող բայերից ավելի գործուն են *առնել, լինել, ածել, առնուլ, արկանել, բառնալ, բերել, գալ, գնալ, գործել, դնել, երթալ, կալ, կացուցանել, հանել, հափանել, հարկանել, ունել, վարել, տալ, տանել* հարադրյալները: Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարանում» հարադրավոր բայերի մեջ ամենաշատը **գոյական + բայ** կաղապարով կազմված հարադրություններն են՝ **անկողին արկանել, անկողին մտանել, ապրակ ի ծնօրս առնուլ, արենաքիրտն լինել, շարժել արտասուս, չտալ նիհր արտեանաց, բանալ զբերան, բանալ զդուռն բերանոյ, պահել զբերան, գիր զգրոյ կախել, գոգ առնուլ, դափաստան դափել, հարկանել յորոգայթս, հաւահար լինել, մատաղ առնել, մ ուղեգնացութիւն առնել, պատերազմ լուծանել, պարիսպ ածել և այլն**: Նշված բառարանում **ածական + բայ, մակբայ + բայ, նախադրություն + բայ** կաղապարներով օրինակներն ավելի սակավ են՝ **անփոյթ առնել, առաջ գնալ, բարի գործել, գազանաբեկ լինել, գաղտ խաւսել, ի վերայ ածել, ի բաց ընկենուլ, ի բաց լինել, ի բաց հալածել**: Զուգադրական բայեր չկան մեր ընտրանքում: Համադրական բարդությունները քննել ենք ըստ հոդակապի առկայության և բացակայության: Լ. Հովհաննիսյանի բառարանում հոդակապով բարդությունները գերակշռում են՝ *ազահաձեռն, ազատասեռ, անձրևաբուլիս առասպելասէր, առիւծաշուն, արագավէժ, արջամուկն, բանաշար, բանտարտես, գաղտախայթ, գարշաբերան, գարշադէմ, գարունահրաշ, գիճասէր, դարմանասէր, դիրահամբոյր, եթերացայտ, եղէգնաբերան, զագրահոյր, ըղծաբորբոք, թագազգեսց, ժահահոգի, ժրալեզու, լեզուագէտ, խաչաբեր, խիտասաղարթ, խոժոռամիտ, խոտաքնին, ծայրախուզ, ծովահանճար, կախարդակից, կարճահատ, կշռաքնին, հաստախոց, հեղձամահ, հերակազմ, հոգեգող, ձայնաղի, ձիախորով, ձկանաբեկ, ծորահոս, ճագարակեր, ճոխաբառ, մահորոճ, մանկաբոյժ, միամոյկ, մշտաթոր, յաղթազգեստ, յարագող, շանթազգեստ, շեշտաժայռ, շնչապահ, շուշանանման, ուրուախօս, պաճուճազգեստ, պարկերաճոխ, սառնասառոյց, սուտերալեզու, ստապաճոյճ, վաճառագիտ, տիրատուր, տօթախառն, ցոփաբերան, ցրտամիտ, ցողացայտ, փայտամայր, փառազգեստ, քաղցրազբօս, քաջաբուր, քարախրամ, օդապատառ, օրագիտ, օրածին, օրինատուր և այլն*: Անհոդակապ բարդությունները ավելի քիչ են, և նրանք ոչ թե ամեն տեսակ արմատներից (կամ ձևայիններից) են կազմվում, այլ այնպիսիներից, որոնք իրար հետ առանց հոդակապի միանալու և մի ընդհանուր բառային նշանակություն արտահայտելու հիմքերով են օժտված: Կան երկու տեսակ բարդություններ՝ 1) ձայնավորասկիզբ բաղադրող հիմք ունեցող և 2) բաղաձայնասկիզբ բաղադրող հիմք ունեցող: Անհոդակապ բարդությունների մեջ գերիշխող են ձայնավորասկիզբ բաղադրող հիմքով բարդությունները: Լ. Հովհաննիսյանի բառարանում մեզ հանդիպած անհոդակապ բարդություններն են՝ *ազատայր, աղբաման, աստուածանուն, բանիցընկեր, բանիցխնդիր, բարձընկալ, բարձրանձն, բարձրիմաց, գանձտեր, գեղառու, երագոտն,*

ժանտիմաց, ինքներես, խաշնտես, խորարթուն, խորեջ, կանեփհատ, կարգընկեց, կարճագատ, կարմրերես, կենսընկալ, հեթանոսազն, հրարձակ, մահորոճ, մանրաստղ, մշտերես, շնչախտ, ողբասաց, չուրնձայ, պապանուն, ջրքաշ, սուրբընկալ, սպիրակերամ, սրիմաց, տնօրհնէք, փայլարձակ, քաջըղձալի, քոյրատեսց, օրէնսդնել, օրհներգ և այլն:

Ըստ խոսքամասային պատկանելության՝ համադրական բարդությունների սերող և բաղադրող հիմքերը մեր ընտրանքում ներկայացնում են հետևյալ կաղապարները. 1) Գոյական + գոյական՝ արգանդապտուղ, արինագութ, արձանաքար, արքայամանուկ, դասակողմն, դասահող, դասապատիւ, դասագործ, դիաժողով, ճառագայթապերճ և այլն: 2) Գոյական + ածական՝ արգանդակից, աւազախառն, ծառախիտ, ճեղնահմուտ: 3) Գոյական + բայահիմք՝ արծաթապեսց, արուստպան, արօտախոյզ, ճառագայթապարած, ճառագայթապտու: 3) Ածական + գոյական՝ արդարաշահ, արիաբան, արձակավճիռ, դալարածն, դառնաբերան, դառնալուր, դժուարայոյս, խստաբան, ճերմակաճի: 4) Ածական + բայահիմք՝ արդարամատոյց, դատարկակեր: 5) Ածական + ածական՝ արժանասքանչ, դառնադաժան, դժուարակիրթ: 6) Դերանուն + գոյական՝ ինքնադէմ: 7) Մակբայ + ածական՝ արագաթիւր, արագահաշտ: 8) Մակբայ + բայահիմք՝ արագադարձ, արագազլոր, արագալոյծ, արագահայեաց, արագավէժ, դեռաթաթախ, դեռաթառամ, 9) Թվական + գոյական՝ բիրամարդ:

Բառակերտման մեջ կարևոր է ածանցի դերը՝ կապված տարբեր երևույթների և հասկացությունների հետ: Լեզվի զարգացմանը զուգընթաց ածանցումը կրել է որոշակի փոփոխություններ և՛ որակական, և՛ քանակական տեսակետից: Հայերենում ածանցները կարելի է խմբավորել՝ ելնելով նրանցով կազմված բառերի խոսքիմասային պատկանելությունից, բառի կազմում ածանցի գրաված դիրքից, նրա կենսունակությունից և այլն: Ածանցման հիմնակաղապարը հիմնական ձևույթի և ածանցի բաղադրությունն է, որը, ըստ հիմնական ձևույթի նկատմամբ ածանցի գրաված դիրքի, լինում է նախաձանցավոր և վերջաձանցավոր: Առաջինները և՛ քանակով, և՛ բազմազանությամբ զիջում են վերջիններին: Ինչպես գիտենք, բառակազմության մեջ բոլոր ածանցները միևնույն արժեքը չունեն. կան ակտիվ և ոչ կենսունակ ածանցներ, որոնք ժամանակի ընթացքում կարող են փոխել իրենց տեղերը: Հիմնականում տարածվելու միտում են հանդես բերում **-ակ, -ավոր, -արան, -իկ, -յա, -յակ, -ովին, օրէն, -ուն** և այլ վերջաձանցներ, որոնք ոչ կենսունակ լինելով հանդերձ՝ ստեղծում են բառային նոր միավորներ՝ գոյականներ, ածականներ, մակբայներ: Նախաձանցների և վերջաձանցների հատուկ սահմանափակումներ չկան, և դրանք ստացվում են որպես բառակազմական հաջորդական քայլերի արդյունք¹:

Խմբավորելով քննության ենթարկվող բառարանում հաշվառված ածանցավոր բառերը և համեմատելով արդի հայերենի բառարանների հետ՝ արձանագրել ենք հետևյալը. ա) ժամանակի ընթացքում բազմաթիվ բառեր կորցրել են ածանցները՝ հայտնի չէ, թե երբ, և արդի հայերենում միայն երևում է

¹ Տե՛ս Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Եր., 1987, էջ 171:

դրա հետևանքը: Թե ժամանակի որ հոլովույթի համար են այդ բառերը դարձել նորակազմություններ, արդեն լեզվի պատմական քննության առարկա է, քանզի նորակազմությունների համար ժամանակային որոշակիության սահմանումը խիստ պայմանական է, և ավելի կարևոր է դրանց արժևորումը գործառական, բառակազմական և այլ հատկանիշների քննությամբ: Բ) մի շարք բառեր ձեռք են բերել նոր ածանցներ՝ իրենք դառնալով սերող հիմքեր բաղադրությունների համար, որն էլ դարձյալ որպես հետևանք երևում է արդի հայերենում: Համեմատվող բառարաններում համընկնող մնացած բառերը պատրաստի ժառանգություն են արդի հայերենում՝ առանց իմաստային կորստի կամ հավելումների: Այս խմբավորման ընթացքում առանձնացրել ենք 1) *ածանցավոր* կազմությունների *ածանցանկում*՝ ա) ժխտական **-ան** նախածանցի անկում՝ *անապառաժ-ապառաժ, անըմբշամարտիկ-ըմբշամարտիկ, անթագաւոր-թագաւոր, անինքնակամ-ինքնակամ, անկակուղ-կակուղ, անկամակ-կամակ, անհանճարեղ-հանճարեղ, անհեշտական-անհեշտ, անհոսանուր-հոսանուր, անհրամանաւար-հրամանաւար, անտեսչութիւն-տեսչութիւն*: Բ) Վերջածանցի /վերջին վերջածանցի/ անկում՝ **-ա/բար**՝ *ամբարտաւանաբար-ամբարտաւան, անաղարտաբար-անաղարտ, աներասանակաբար-աներասանակ, անխախտաբար-անխախտ, Յիսուսաբար-Յիսուս, ոստիկանաբար-ոստիկան անյիշատակաբար-անյիշատակ, բնաբանաբար-բնաբան, խրատաբանականաբար-խրատաբան, միայնակեցաբար-միայնակյաց, յատակաբար-յատակ, յարելաբար-յարել, -ա/գոյն*՝ *աներեւոյթագոյն-աներեւոյթ, անկարողագոյն-անկարող, դիցապաշտագոյն-դիցապաշտ, մարմնասիրագոյն-մարմնասեր, -ան-մատենանշան-մատենանիշ, -անք*՝ *անամօթանք-անամօթ, -ա/պէս*՝ *անլրապէս-անլուր, անյապաղապէս-անհապաղ, ա/նոց*՝ *մարտանոց-մարտ, -ակ*՝ *աստուածագործակ-աստուածագործ, գեղեցկադիմակ-գեղեցկադեմ, կրկնոցակ-կրկնոց, ձեռագործակ-ձեռագործ, նափորտակ-նափորտ, ոսկեհիսակ-ոսկեհիս, սաղմոսերգակ-սաղմոսերգ, -ական*՝ *անառակական-անառակ, անգրական-անգիր, անպատճառական-անպատճառ, անցաւորական-անցավոր, արիստոքրատական-Արիստոքրատել, խառնարձակական-խառնարձակ, համաստիական-համաստիւտ, հրեղինական-հրեղեն, մարախական-մարախ, միաձայնական-միաձայն, միաւորական-միավոր, նայական-նայ, շրջակայական-շրջակա, ողջախոհական-ողջախոհ, -ակի*՝ *հոմաձայնակի-հոմաձայն, միաւորակի-միավոր, -ան*՝ *մարդակերպարան-մարդակերպար, ա/ւոր*՝ *անյայտաւոր-անհայտ, յաւելաւոր-հավել, -ացի*՝ *մարմնացի-մարմին, մոմեղինաւոր-մոմեղեն, -ել*՝ *առաւելաբանել-առաւելաբան, բանաւորել-բանավոր, բարեձեւել-բարեձև, բարձրախոհել-բարձրախոհ, բոլորակել-բոլորակ, գիշահորել-գիշահոր, հեռասահմանել-հեռասահման, ձեռակապել-ձեռակապ, մարմնագգեստել-մարմնագգեստ, մշտահոսել-մշտահոս, նախաշաւել-նախաշավիղ, նաղաշել-նաղաշ, պարախմբել-պարախումբ, պատուադրել-պատվադիր, պարախմբել-պարախումբ, սնավաստակել-սնավաստակ, -անալ*՝ *անկերպանալ-անկերպ, նոխազանալ-նոխազ, ա/պես*՝ *մեծախորհրդապէս-մեծախորհուրդ, ա/պէս*՝ *ատենականապէս-ատենական, բիրապատկապէս-բիրապատկիկ, ա/ստան*՝ *մուրաստան-մուրտ, -եալ*՝ *անարատեալ-անարատ, անդրանկեալ-*

անդրանիկ, գեղաշարեալ-գեղաշար, դիւամուլեալ-դիւամուլ, խաւարամածեալ-խաւարամած, հողմախառնեալ-հողմախառն, նորակնքեալ-նորակնունք, սովամաշեալ-սովամաշ, փնդդեալ-փնդդել, **-եայ՝** բարեպաշտօնեայ-բարեպաշտոն, թաւամագեայ-թավամագ, **-ելի-**անխնդրելի-անխնդիր, **-եան՝** միահեգեան-միահեգ, **-ենի՝** անծայրենի-անծայր, **-ող՝** անբանող-անբան, անզանազանող-անզանազան, դեղագործող-դեղագործ, **-ի՝** անկտրելի-անկտրել, ապուսելի-ապուսել, դանդաղելի-դանդաղել, աղարպելի-աղարպել, յամելի-համել, ծաղկելի-ծաղկել, ճառելի-ճառել, մաքրելի-մաքրել, միալարի- միալար, նմանելի-նմանել, նշկահելի-նշկահել, պատարագելի-պատարագել, **-իկ՝** բազմապենչիկ-բազմապենչ, **-իչ՝** արդարակշռիչ-արդարակշիռ, **-որդ՝** անհաւասարորդ-անհավասար, **-ոյ՝** մեղկոտ, **-ոց-**մատռուակոց-մատռակ, **-ու՝** հայրանենգու-հայրանենգ, **-ունդ՝** աստուածասնունդ-աստուածասուն, **-ա/գոյն՝** արագաշարժագոյն- արագաշարժ, **-ութիւն՝** ազգաշաղախութիւն-ազգաշաղախ, ակնավայելութիւն-ակնավայելուչ, աթոռապահութիւն-աթոռապահ, ախորժալրութիւն-ախորժալուր, ակնապեսութիւն-ակնապես, հուժկութիւն-հուժկու, աթոռասիրութիւն-աթոռասեր, անդրանկածնութիւն-անդրանկածին, անմխիթարութիւն-անմխիթար, բարեդիմութիւն-բարեդեմ, հալածականութիւն-հալածական, համաւորութիւն-համալոր, մարդապելութիւն-մարդապոյաց, մարմնաձեւութիւն-մարմնաձև, մեծաջանութիւն-մեծաջան, մեծաքայլութիւն-մեծաքայլ, միաւորագոյն-միւլոր, յարդարութիւն-հարդար, շաղապարութիւն-շաղապար, որոմնացանութիւն-որոմնացան, չարաբարոյութիւն-չարաբարոյ, չափութիւն-չափ, պողաւորութիւն-պողաւոր, սերմնացանութիւն-սերմնացան, սոսկութիւն-սոսկ, սրուգախօսութիւն-սրուգախօս, **-ումն՝** մեղկումն-մեղկ, մղձկումն-մղձուկ, մշտակոսութիւն-մշտակոյս: Հետաքրքիր են այն բաղադրյալ բառերի օրինակները, որոնց մեջ կրճատվել է առաջին բայական բաղադրիչի բայական ցուցիչը, օրինակ՝ **անեղեւածին՝** անգո, չեղած բանից ծնված (, 2Բ, 33)-**անեղածին՝** անեղից ծնված(ՀԲԲ, 1, 110), **աներեւելական՝** աներեւելի (2Բ, 33)-**աներեւական՝** չերևացող (ՀԲԲ, 1, 111):

Գ)Վերջածանցի հավելում՝ **-որդ՝** անմնաց-անմնացորդ, **-ակ՝** արինապտես-արինապտեսակ, **-ան՝** արուեստակ-արուեստական, հակասակ-հակասական, **-իչ՝** արուեստաւոր-արուեստավորիչ, **-ութիւն՝** նմանագիր-նմանագրոյթյուն, **-իք՝** չարակարծ-չարակարծիք: Զանազան խոսքի մասերի բայացում է կատարվում բայական բառակազմական մասնիկներով, քանի որ մեր լեզվում առանց բայական մասնիկավորման բառերի բայացման երևոյթ չկա. «... զանազան բառերի բայացումը, արտահայտվելով մասնիկավորումով, դրա հետ միասին ստանում է իմաստային փոխանցում, այլապես հիշյալ մասնիկավորումը լոկ ձևական բնույթ կկրեր, և խոսքի-մասային նշանակության փոխանցում չէր կատարվի»¹: Ժամանակակից գրական հայերենում գործածվող բայերի մեջ երևում են զանազան խոսքի մասերի բայական մասնիկավորումը և դրան զուգահեռ խոսքիմասային նշանակության փոխանցումը: Այստեղ լայնորեն գործածվում են անվանական խոսքի մասերը և հատկապես գոյականն ու ածականը: Այսպես,

¹ Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Եր., 1962, էջ 50:

ունենք գոյական անուններից՝ *մատանի-մատանել (մատանիով կնքել)*, ածական անուններից՝ *ակնբաց-ակնբացել, անդրանիկ-անդրանկանալ*¹, *գաազանահար-գաազանահարել, նախացոյց-նախացուցել*², *նախընտիր-նախընտրել, ոգեզէն-ոգեզինել*³: Ժամանակակից հայերենում գործածվող այս բայերը անմիջականորեն կապվում են իրենց կազմության հիմքում ընկած բառերի իմաստների հետ: Անվանական բառերից բայական բառերի կազմումը ժամանակակից հայերենի սիրած լեզվական-քերականական միջոցներից մեկն է: Այս ճանապարհով լեզվի բայական բառապաշարի հարստացումը հայերենի համար խիստ արդյունավետ և օրինաչափ երևույթ է և գործուն իրողություն է եղել հայ գրավոր լեզվի բոլոր շրջաններում և բարբառներում: Այդպիսի բայեր հանդիպում են թե՛ առօրյա հաղորդակցման ընթացքում, թե՛ գրավոր խոսքում, թե՛ գիտական ու գեղարվեստական գործերում⁴:

Ներկայացնենք նախաձանցման կաղապարները մեր ընտրանքում.

1. միարմատ մեկ նախաձանցով կազմություններ⁵՝ **ան-** *անաշտանակ* (30), *անապառաժ* (30), *անապուր* (30), *անարահետ* (30), *անխում* (36), **չ-** *չհուպ* (234), *չճանապարհ* (234), *չմեր* (234), *չկաթողիկոս* (234), *չիւր* (234), **տ-** *տրկեղծ* (276), **-գեր** /**ա՛** *գերադրուար* (83), *գերակիր* (83), *գերայաղթ* (84), **համ/ա-** *համանձն* (160), *համաթշուառ* (159), *համակոյր* (160), *համավար* (161), *համորովայն* (161), *համահովի* (159), **մակ/ա՛** *մակադէր* (185), *մակբան* (185), **յար/ա՛** *յարաբարձր* (203), *յարագող* (203), *յարապայծառ* (203), **նախ/ա՛** *նախաբուղիս* (209), *նախապատարագ* (210), *նախասասար* (210), *նախօրինակ* (232), **ներ՝** *ներմարմին* (213), *ներվարակ* (209), *ներագիր* (212), **շար/ա՛** *շարագիծ* (220), *շարակող* (220), *շարսաղար* (221), **պար/ ա՛** *պարաժոյժ* (241), **վեր/ա՛** *վերապայծառ* (266), **տար/ա՛** *տարագիծ* (272), *տարածայն* (273):

2. Երկնախաձանց միարմատ կազմություն՝ **անն +շար՝** *անշարախառն* (41):

¹ Այն բառերը, որոնք լեզվի մեջ իբրև բառական անկախ միավորներ ունեն ինքնուրույն կիրառություն, մասնիկավորվելով **-անալ** ածանցով, միշտ նախորդում են կազմված համապատասխան բայերին (տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 76):

² Բայակազմական մասնիկավորման մեջ պահպանվում են հնչյունափոխական օրենքները (տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 78):

³ Կատարվել է զանազան խոսքի մասերի բայացում բայական բառակազմական **-ել** մասնիկի միջոցով: Դրան զուգահեռ կատարվում է խոսքիմասային նշանակության փոխանցում, այլապես հիշյալ մասնիկավորումը լոկ ձևական բնույթ կկրեր, և խոսքիմասային նշանակության փոփոխություն չէր կատարվի: Այս բայերն անմիջականորեն կապվում են իրենց կազմության հիմքում ընկած բառերի իմաստների հետ: Այստեղ տարբեր խոսքի մասերից ակտիվ են անվանական խոսքի մասերը՝ հատկապես գոյականը և ածականը (տե՛ս Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, Եր., 1962, էջ 50):

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 57-58:

⁵ Նախ ներկայացնում ենք ժխտական ածանցներով կաղապարները: Մեծ հաճախականություն ունեցող կաղապարներից բերում ենք մի քանի օրինակ, իսկ սակավաթիվ վկայությունների դեպքում բերում ենք բոլոր օրինակները:

3. Վերջաձանցով ձևավորված երկրորդային հիմքերով նախաձանցավոր կազմությունները որոշվում են վերջաձանցավոր կամ նախաձանցավոր հիմքի անկախ գոյության փաստով և սերող հիմքի ու սերված բառի ավելի սերտ իմաստային կապով՝ **անախտաբար** (36), **անճարաբար** (40), **անլրապէս** (36), **անգրական** (32), **անթափական** (35), **անկոութին** (35), **անհալութին** (38), **անփառաւոր** (27), **անարատեալ** (31), **անարբուն** (31), **ա ապացուցօրէն, բաց/ատպութին** (72), **բաց/ացուցական** (72), **բացբառնութին** (72), **բացբարձիչ** (72), **գեր/աժաձկաբար** (83), **գեր/ապարծիկ** (84), **ենթ/ագրական** (101), **թեր/աբայութին** (120), **հակասակ** (159), **հոմ/աձայնակի** (174), **մակդարձութին** (185), **մակգերեզմանական** (185), **մակերեւապէս** (185), **յար/աձգաբար** (203), **յար/ալուցեալ** (203), **յար/ախմբումն** (203), **յար/ավայելուչ** (203), **նախ/աճառական** (209), **նախ/ակրթարան** (209), **նախ/ագոյութին/209**, **նախակատարեալ/209**, **նախ/ասկզբնակ** (210), **ներհիւսութին** (209), **ներհունապէս** (209), **ներմասնաբար** (209), **չխօսուն** (234), **չհեղգութին** (234), **չպարտապան** (235), **չիլական** (234), **վեր/ագոյակ** (265), **վեր/ահողովումն** (266):

Կան բազմաթիվ բառեր՝ հատկապես **ան-** նախաձանցով և **-ի** վերջաձանցով, որոնք զանազան բայերից ստեղծված նորակազմ բաղադրություններ են՝ **անթնդելի** (35), **անխնդրելի** (36), **անծլելի** (36), **անպարպելի** (41), **անհանդիպելի** (38), **անտրտմելի** (43) և այլն:

4. Երկու վերջաձանցով երկրորդային բաղադրյալ հիմքերով նախաձանցավոր կազմություններ՝ **անանձն+աւոր+ութին** (30), **աներեւ+ոյթ+ա/գոյն** (33), **անկար+ող+ա/գոյն** (37):

5. Սերող հիմքը կարող է ունենալ և՛ նախաձանց, և՛ վերջաձանց՝ **համ/ա+ներգործ+ութին** /159, **հակ/ա+յարսաստ+ութին** (159), **չ+նախախնամ+ութին** (234), **չ+ընդուն+ելի** (234):

6. Հոդակապավոր բարդ հիմքով նախաձանցավոր կազմություններ՝ **անբանագործ** (32), **անինքնական** (35), **անլծակից** (35)²:

7. Կան կազմություններ, որտեղ նախաձանցը կցվում է բարդաձանցավոր երկրորդային հիմքին՝ **անաստուածգիտութին** (31), **անարօրադրեալ** (31), **անըմբշամարտիկ** (34), **գերահրաշապետաւոր** (83), **գերերկնապանծ** (84), **ջութկալութին** (234), **չարձաթսիրութին** (233):

Վերջաձանցավոր կազմություններն ավելի բազմազան են: Մեծ թիվ ունի գրաբարի ամենագործուն կաղապարը՝ միարմատ մեկ վերջաձանցով կազմություններ՝ **-ա/բար՝ աղեբար** (23), **-ա/գին՝ թախանձագին** (119), **-ա/գոյն՝ անիծագոյն** (35), **զգայագոյն** (111), **-ակ՝ արուեստակ** (59), **երեսակ** (105), **մթնակ** (189), **-ական՝ բոկական** (76), **գռեհական** (88), **լակոնական** (127), **ծուլական** (142), **-ային՝ ժանգային** (124), **գաւառային** (81), **-անոց՝ զբօսանոց** (111), **մարտանոց** (190), **-անք՝ աղօթանք** (25), **դժուարանք** (94), **ժպտանք** (124), **խարանք** (134), **նախանձանք** (210), **-ա/պան՝ գաղտնապան** (79), **-ա/պէս՝ երկրապէս** (109),

¹ Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Եր., 1987, էջ 170:

² Այս կաղապարի օրինակների մեծ մասն ունի **ան-** նախաձանց:

այլանդակապէս (29), երախայապէս (102), -**աւոր**՝ ազդաւոր (19), դազադաւոր (90), դրոշմաւոր (98), դեղաւոր (93), դէզաւոր (93), -**արան**՝ ըմպարան (115), բրտարան (78), օծարան (293), -**ա/ստրան**՝ ընկուզաստրան (117), - **ա/ցի**՝ այլացի (29), այրացի (30), ելլադացի (99), -**եալ**՝ ակնեալ (22), աղտեալ (25), երկրեալ (109), -**եայ**՝ դահանակեայ (90), -**եան**՝ բարելոնեան (63), -**ելի**՝ արշաւելի (59), բասրելի (69), գրելի (89), -**եղէն**՝ այծեղէն (29), եղջիրեղէն (101), -**ենի**՝ երգենի (104), ներբողենի (213), **իչ**՝ զանիչ (80), ածիչ (20), եղծիչ (101), զանգիչ (111), զեղծիչ (112), **ոյթ**՝ բազմոյթ (64), - **ովի**՝ դիւրովի (98), - **որդ**՝ թաղնորդ (119), -**ոց**՝ եղեգնոց (101), խանձոց (133), -**իկ**՝ բառիկ (68), եղբայրիկ (100), դրամիկ (98), նիզակիկ (214), **ուն**՝ գթուն (84), -**ուտ**՝ գոլորշուտ (87), -**ող**՝ եզնող (99), -**ւոր**՝ գիթուր (85), -**ութիւն**՝ արաւութիւն (56), բրտութիւն (78), գործութիւն (88), -**ուհի**՝ արմուհի (59), -**ումն**՝ աղաշումն (23), բողբոջումն (76), դարանումն (91), զրկումն (114), ծիրումն (142), - **ուն**՝ գթուն (84), թաթաւուն (119), -**օրէն**՝ երամօրէն (104), ծովօրէն (142):

Երկրորդ տեղում երկրորդային վերջածանցավոր հիմքերով կազմութիւններն են՝ բուժողական (76), ալետորաբար (20), ալետորոյթ (20), արփիաւորիչ (60), դրժողաբար (98), ելողական (100), կրկնոցակ (157), մայրենական (187), մանկատրապէս (188), տրեւնականապէս (55), բիրապապկապէս (75), արշաւանիկ (58), գործականաւոր (88), գիտնաբար (85), գծողակ (86), գովելապէս (86), **գովելութիւն** (86), գրչիկ (89):

Նախածանց ունեցող երկրորդային սերող հիմքով վերջածանցավոր կազմութիւնները խմբավորվում են ըստ վերջածանցների՝ **ան...ական**՝ անարարչական (31), անգոյացական (32), **ան...անք**՝ անամօթանք (30), **ան...ութիւն**՝ անաղտեղութիւն (30), անընտրութիւն (34), անաւելորդութիւն (31), **ան...ապէս**՝ անխոհականապէս (36), **ան...եալ**՝ անմկրտեալ (40), անյղփացեալ (41), **ան...ակ**՝ անգովակ, **ան...ուտ**՝ անհոսանուտ (39), **ան...ող**՝ անբանող (32), անդիպող (33), **առ...աւոր**՝ առերկրաւոր (50), **բաց...եալ**՝ բացերասանակեալ (72), **գեր/...իկ**՝ գերառիկ (84):

Ինչպէս հայտնի է, գրաբարի բառակազմական համակարգում կան նաև խառը տիպի կաղապարներ, որոնք խմբավորվում են ըստ վերջածանցների՝ **ա/գոյն**՝ բարեգործագոյն (69), **ակ**՝ բազումօգտակ (65), խաբողորոսակ (132), **ական**՝ բարեսնդական (70), ճօճաճեմական (184), -**ակի**՝ քաջաճեակի (286), - **ան**՝ կիսախորովան (151), -**ա/պէս**՝ բնաբանապէս (75), -**եալ**՝ գեղաշարեալ (81), - **եայ**՝ եռահնգեայ (102), երկայնուղեայ (107), - **եան**՝ բարձրագահեան (70), -**ենի**՝ գծագրենի (86), -**իկ**՝ բանապարծիկ (67), դիւրակենցաղիկ (97), -**իչ**՝ գետնաթիչ (82), -**ու**՝ գազանարբու (79), ժանտարկու (124), - **ութիւն**՝ բաղարջակերութիւն (66), - **ու**՝ դասառու (91):

Այսպիսով, հայերենի բառային կազմի հարստացումը կատարվում է հիմնականում լեզվի ընձեռած ներքին հնարավորութիւններով՝ բառաբարդմամբ և ածանցմամբ: Վերջինները հիմք են դարձել նաև հայերենի բազմաթիվ տերմինների ստեղծման, քանի որ որևէ լեզվի զարգացման ու հարստության ապացույցը ոչ թե նրա բառային կազմի քանակական մեծութիւնն է, այլ համապատասխան հասկացութիւնների իմաստային լիակատար ընդգրկումը,

բառերի հասկանալիությունն ու զուգորդելիությունը: Բառաբարդման բոլոր եղանակները, ինչպես նաև փոփոխություններով գործուն են նաև այսօր:

Ածանցները, ինչպես նաև ածանցման կաղապարները գրաբարում ունեն զանազան դրսևորումներ և հիմնականում մնալով նույնը՝ դարերի ընթացքում ավելի ընդարձակվել են և ձեռք բերել լայն ընդգրկում: Կան բազմաթիվ ածանցներ, որոնք ժամանակի հոլովությամբ կորցրել են իրենց կենսունակությունը, և ընդհակառակն, հնում սակավ կենսունակ ածանցներ և ածանցական կաղապարներ ակտիվացել են և կայունացել լեզվում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբրահամյան Ա., Բայը ժամանակակից հայերենում, Եր., 1962:
2. Հովհաննիսյան Լ., Գրաբարի բառարան.Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Եր., 2010:
3. Հովսեփյան Լ., Գրաբարի բառակազմությունը, Եր., 1987:
4. Հովսեփյան Լ., Գրաբարի բառակազմության վերլուծական տիպը, Եր., 2016:

WORD-FORMATION PATTERNS OF THE UNVERIFIED WORDS IN "NEW DICTIONARY OF THE HAYKAZYAN LANGUAGE"

GRIGORYAN SUSANNA

PHD in Philological Sciences,

Associate Professor

e-mail: susannagrigoryan@ysu.am

PARONYAN NAIRA

PHD in Philological Sciences,

Associate Professor

e-mail: nairaparonyan@ysu.am

The present article aims to show the word-formation of Grabar (Old Armenian) according to the words not found in the "New Dictionary of the Haykazian Language". As it is known, the most sensitive of the language components is its vocabulary, and unlike the other components of the language system, most changes occur there. The enrichment of the vocabulary of the language is carried out by external and internal means. Vocabulary classification can be done from various points of view: by the degree of activity and prevalence of word usage, application features of words, word-formation patterns, etc. At different stages of the development of the Armenian language, new word forms were created, which caused semantic development and

changes, the emergence of new meanings, and the loss of the old ones. One of the essential means of enriching the vocabulary of the Armenian language is its word formation and word-creation, and the gain of the new semantics of the words. Over the centuries, the word-forming capabilities of the Armenian language have been further developed and improved, becoming a means of creating new patterns, and revitalizing the word-forming role of a few functional patterns, several words, and suffixes. The most important role in the richness of Grabar's lexicon is its vocabulary, with analytical and synthetic types. Derivatives and derivational patterns have also evolved over the centuries and by expanding, gained wide coverage. In contrast, some derivative patterns have ceased to be effective. Through the lexical analysis of the lexical material attested in Lavrenti Hovhannisyan's "Grabar dictionary, words not attested in the New Haykazian dictionary", we attempted to present the lexical patterns of complex and derivative words of Grabar, their vitality and prevalence from the synchronic point of view, and in some cases, the further alterations of their patterns.

Keywords: *word-building, compounding, Grabar (Old Armenian), vocabulary, enrichment, synchronic, pattern, affix, component.*

СЛОВООБРАЗОВАТЕЛЬНЫЕ МОДЕЛИ СЛОВ, НЕ ЗАСВИДЕТЕЛЬСТВОВАННЫЕ В «НОВОМ СЛОВАРЕ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА»

ГРИГОРЯН СУСАННА

Кандидат филологических наук, доцент

Преподаватель ЕГУ

электронная почта: susannagrigoryan@ysu.am

ПАРОНЯН НАИРА

Кандидат филологических наук, доцент

Преподаватель ЕГУ

электронная почта: nairaparonqn@ysu.am

Цель данной статьи – представить словообразование Грабара по словам не засвидетельствованных в «Новом словаре древнеармянского языка». Как известно, наиболее чувствительной составляющей языка является словарный запас, и, в отличие от других компонентов языковой системы, именно здесь происходит больше всего изменений. Обогащение словарного запаса языка осуществляется как внешними, так и внутренними средствами. Классификация

лексики может производиться с различных точек зрения: по степени активности и распространенности словоупотребления, особенностей применения слов, закономерностей словообразования и т. д. На разных этапах развития армянского языка создавались новые словоформы, что вызывало семантическое развитие и изменения, появление новых значений и утрату старых. Одним из важных средств обогащения словарного запаса армянского языка, обогащения словарного запаса армянского языка является собственное словообразование и словотворчество, переосмысление слов.

На протяжении столетий словообразовательные возможности армянского языка получили дальнейшее развитие и усовершенствование, став средством создания новых моделей, возрождая словообразовательную роль немногих функциональных моделей, ряда слов и суффиксов. Важнейшую роль в богатстве словарного запаса Грабара играет аналитические и синтетические сложные слова. Производные и деривационные модели также развивались на протяжении веков расширялись и получили широкое распространение. Напротив, некоторые производные модели перестали быть эффективными. Л. Путем лексического анализа лексического материала, засвидетельствованного в «Словаре Грабара» Л. Оганнисяна, слов, не засвидетельствованных в «В новом словаре древнеармянского языка», мы попытались представить лексические закономерности сложных и производных слов Грабара, их жизненность и распространенность в современной точке зрения, а в некоторых случаях и дальнейшие изменения в закономерностях.

Ключевые слова: словообразование, словосложение, грабар, состав слов, обогащение, синхронный, модель, суффикс, компонент.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 05.11.2024թ.:

Հոդվածը գրախոսվել է 20.11.2024թ.:

Ընդունվել է տպագրության 25.04.2025թ.: